ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 282 Ա
« 11 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023Թ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ № ԳՍ/15.2/32582-2022 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում 2024 թվականի հունվարի մեկի դրությամբ առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները 2024 թվականի հունվարի մեկից մինչև 18-ը ընկած ժամանակահատվածում կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել տվյալ համայնքի ղեկավարին և անասնաբույժին:
3. Անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետներում:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կ" ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք" ԵՂԵԳՆԱՁՈՐ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի
<<11>> դեկտեմբերի N [illegible] Ա-որոշման

2024թ հունվարի 1-ից մինչև 18-ը ընկած ժամանակահատվածում մարզի գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում հունվարի 1-ի դրությամբ անցկացվող գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու համար և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի կազմը.

1. Մարգարյան Գեղամ - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/
2. Ղազարյան Սևակ - ՀՀ Վիճակագրական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/
3. Հարությունյան Աղվան - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ
4. Խաչատրյան Գոհար - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
5. Թունյան Աշոտ - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ
6. Ավագյան Համլետ - ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Վայոց ձորի մարզային կենտրոնի պետի պարտականությունները կատարող
7. Հարությունյան Անի - <<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Եղեգնաձորի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/
8. Իխտիարյան Հովհաննես - <<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/